

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Բան. գիտ. թեկն., դոցենտ

Էլհասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

**ԾԻՍԱԿԱՆ ՀԱՆՐԵՐՁԱՆՔԻ ՀԻՆՀԱՅԵՐԵՆՑԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ՝
ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՐԲՅՈՒՐ**

Ամփոփում

Ներկայացվող հոդվածի նպատակը հայ ծիսական եզրույթների, ի մասնավոր՝ եկեղեցական հանդերձանքը բնութագրող բառամիավորների քննությունն է: Այդ նպատակի համար անհրաժեշտ ենք համարել առանձնացնել եկեղեցական հագուստների անուն-եզրույթները, նշել արմատական բառերի ծագման աղբյուրները, դիտարկված բառերի համար բերել բնագրային օրինակներ՝ դրանց իմաստային յուրահատկությունները ցույց տալու նպատակով:

Սույն հետազոտության համար նյութ են ծառայել կրոնագիտական և այլ տերմինային համակարգերին նվիրված տարբեր ուսումնասիրություններ, հայտնի բացատրական և մասնագիտական բառարաններ, մատենագրական տարբեր աղբյուրներ: Նպատակահարմար ենք գտել ծիսական հանդերձանք արտահայտող յուրաքանչյուր բառ մեկնաբանել իմաստային տեսակետից, ինչը հիմք է դարձել մի կողմից՝ եկեղեցական այդ եզրույթների առանձնացման, մյուս կողմից՝ նրանց իբրև այդպիսին, և՛ համաժամանակյա, և՛ տարժամանակյա հայեցակետերով գնահատելու համար՝ դրանով իսկ արժևորելով գրաբարի կարևորագույն դերը արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինային համակարգի ձևավորման ու համալրման հարցում: Որևէ բնագավառի տերմինահամակարգ անջատ չէ ընդհանուր բառապաշարից, այլ դրա մի ենթահամակարգ է՝ իրեն հատուկ եզրույթների ամբողջությամբ: Իհարկե, հայերենի բառապաշարի եկեղեցական բառաշերտը հիմնականում ավանդապահ է, այդ շերտին պատկանող շատ բառեր և եզրույթներ նախագրային շրջանից են՝ գրավոր ավանդված հինգերորդ դարից, այնուամենայնիվ, պատմական զարգացման ընթացքում այստեղ ևս տեղի են ունեցել զանազան բնույթի իմաստային փոփոխություններ:

Մեր կողմից ներկայացված ծիսական եզրույթները՝ հանդերձանքի անունները, հայերենի տերմինաբանական համակարգի մաս են կազմում, հետևաբար ունեն կարևոր նշանակություն հայերենի տերմինաբանության

համար, և հիշյալ բնագավառի ուսումնասիրությունը նույնպես գիտական որոշակի արժեք է ներկայացնում:

Բանալի բառեր և արտահայտություններ. գրաբար, ծիսական, հագուստ, եզրույթ, բառային կազմ, եկեղեցական, փոխառություն, հունարեն, պարսկերեն, լատիներեն:

Ներածություն

Ինչպես հայտնի է, կրոնը հասարակական գիտակցության ձև է, և կրոնական-եկեղեցական հավատալիքների փոփոխությունը սերտորեն կապված է հասարակության և նրա մշակույթի զարգացման հետ: Կրոնները որոշակիորեն կրում են դրանք դավանող ժողովուրդների պատմության յուրահատկության կնիքը¹: «Հայ եկեղեցւոյ աստուածային պաշտամունքը՝ իր այլազան մասերով՝ կը կազմէ ներդաշնակութիւն մը, որուն արտայայտութիւնը իր հոգեւոր նպատակին հասցնելու համար ...հասկացողութիւն պէտք է, ջանք եւ խնամք պէտք է, վերջապէս պէտք է հոգեւոր եռանդ եւ բարեպաշտութիւն»²:

Ինչպես նշվեց, սույն հետազոտության համար հիմք են ծառայել կրոնագիտական և այլ տերմինային համակարգերին նվիրված տարբեր ուսումնասիրություններ, հայտնի բացատրական և մասնագիտական բառարաններ մատենագրական զանազան աղբյուրներ³: Նպատակա-

¹ Տե՛ս Ս. Պապիկյան, Հայ կրոնաեկեղեցական բառապաշարը և նրա պատմական զարգացումը, Ե., 2017, էջ 3:

² Անտոն արքեպս. Չեպչեան, Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս-Լիբանան, 1986, էջ 5:

³ Գ. Աւետիքեան, Հ. Սիւրմելեան, Մ. Աւգերեան, Նոր հայկազեան բառարան(ՆՀԲ), հ. 1, Ե., 1979, հ. 2, Ե., 1981: Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Եր., 2000: Առձեռն բառարան հայկազնեան լեզուի(ԱԲ), Վենետիկ, 1865: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Ե., 1926: Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (ՀԲԲ), Եր., 1944: Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973: Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010: Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր», Ե., 2010: Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (ԱՀԲԲ), Ե., 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԼԲԲ), Ե., 1969: Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարաբժեք բառեր, Ե., 2003: Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003: Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ծիսական բառարան (ԾԲ), Անթիլիաս-Լիբանան, 1979: Յովհաննէ Զօհրապեան, Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1805:

հարմար ենք գտել ծիսական հանդերձանք արտահայտող յուրաքանչյուր բառ մեկնաբանել իմաստային տեսակետից, ինչը հիմք է դարձել մի կողմից՝ եկեղեցական այդ եզրույթների առանձնացման, մյուս կողմից նրանց՝ իբրև այդպիսին, և՛ համաժամանակյա, և՛ տարժամանակյա հայեցակետերով գնահատելու համար՝ դրանով իսկ արժևորելով գրաբարի կարևորագույն դերը արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինային համակարգի ձևավորման ու համալրման հարցում:

Մեթոդաբանությունը

Սույն հոդվածում մեր ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք համեմատական-գուգադրական մեթոդը՝ գրաբարի և ժամանակակից հայերենի ծիսական հանդերձանք արտահայտող բառերի և դրանց կրած իմաստային փոփոխությունների համեմատության հիման վրա:

Աղաբողոն/աղեբողոն՝ գոյ.՝ *հոգևորականի վերնազգեստ, փարաջա, փիլոն*: Բաղկացած է երկու կտոր կերպասից՝ ուսի վրա ձգվող: Բառը փոխառյալ է հունարենից և ստուգաբանորեն նշանակում է *վրան ձգված, նետված*, կամ որ նույնն է՝ *վերարկու*: «Ճարտարախօսք եւ փիլիսոփայք, որ քան *զաղաբողոն* այլ ինչ ոչ արկանէին զանձամբ (Ոսկեբերան: ՆՀԲ, 1, 31):

Արտախուրակ՝ գոյ., ծագել է *արտախոր* բառից, որ ունի տարբեր իմաստներ՝ 1. Թագավորական թագ, 2. Անհայտ բույսի անուն, որ գործածվում է Գողթան երգերի մեջ: 3. «Լուսնթագ» կամ «Երևակ» մոլորակներից մեկի անունը: 4. Թագի վրայի ապարոշ, փաթաթան: 5. Ընդհանրապես գլխի ծածկույթ: Առձեռն բառարանը արձանագրում է նաև *խորանի ծածկոց* իմաստը⁴: Ըստ Օրմանյանի՝ *արտախուրակը* եպիսկոպոսական սրածայր խուրի ետևից կախված երկու ծայրերն են՝ խույրը գլխի վրա ամուր պահելու համար. ասեղնագործված են խույրի նման և առանց դրա գոյություն ունենալ չեն կարող⁵: Բառը բարդված է *արտ* (դուրս, արտաքուստ) և *խոր* բաղադրիչներից: Այս բառին համապատասխանում է եբր. *tiara*՝ *թագ, փաթոց* բառը: Հ. Աճառյանը նշում է, որ ոմանք բառը մեկնում են որպես ոչ թե թագ, այլ մի տեսակ հագուստ՝ ներքնավարտիք, ներքնազգեստ: Սակայն մեր նախնիները Սուրբ գիրքը թարգմանել են հունարենից, ուստի կապ չունի, թե եբրայական բառն ինչ է

Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Ե., 2012: Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987 (ՀԼՊ):

⁴ Տե՛ս Առձեռն բառարան հայկական լեզուի(ԱԲ), էջ 13:

⁵ Տե՛ս Մ. Օրմանեան, ՕԲ, էջ 82:

նշանակում, մանավանդ որ հները միշտ «թագ» են հասկացել⁶: « Եւ արար զվիժակս խորանին ի մորթոց խոյոց կարմիր ներկելոց. եւ *գարտախորակսն* ի կապուտակէ ի վերոյ կողմանէ (Ելք 36:19):

Բազպան⁷ գոյ., պահլ. փոխառություն է *'bazupan*, պարսկ. *bazuban*, որոնցից ոչ մեկը գրականությամբ ավանդված չէ. եկեղեցական զգեստների մեջ՝ պատարագչի թևնոցը, քահանայական զգեստի մաս, որ «քահանան կը կրէ երկու թևերուն վրա, դաստակէն մինչեւ արմունկը: Բազպանները շինուած են ամբողջ զգեստին կերպասէն կամ թէ յատուկ ասեղնագործուած են, եւ վրանին ունին մէյ- մէկ խաչ»⁷: «Զայս ձեռնուրարս եւ *բազպանս* քահանայական համարել ի սպասաւորութիւն սպասաւորաց (Մաշտոց: ՆՀԲ, 1, 421): Արդի հայերենում նշանակում է ընդհանրապես զգեստի մաս, որ անց են կացնում դաստակին՝ շապկի թեզանիքի վրայից: Նաև ռազմական տերմին է՝ *բազուկները պաշտպանող մետաղյա զրահ*:

Գտակ⁸ գոյ., թավշյա կամ ասվյա փոքրիկ սև գլխանոց, որ ցուրտ ժամանակ գործածում է եկեղեցու պաշտոնյան: «Որպէս թէ *գտակ* կարմիր դիցէ ի գլուխ կրօնաւորն» (ՆՀԲ, 1, 583): Ըստ Հ. Աճառյանի՝ մեր բառի հետ նույնն են վրաց. *գաղիա*, *քուղի* բառերը: Սակայն սրանք չունեն հայերենի-*ակ* մասնիկը և ներկայացնում են բառի արմատական ձևը, ուստի թերևս մեր *գղակ* -ը փոխառված լինի կովկասյան լեզուներից կամ բոլորը միասին՝ խաղիներենից⁸: Ըստ Գ. Զահուկյանի՝ բառը փոխառված է իրանական աղբյուրից՝ *goudak*՝ *goud*՝ *ծածկել*, որտեղից նաև վրաց. *գուտի*⁹: Կա նաև հայերեն *գուտի* բառը՝ գղակ¹⁰: Ս.Մալխասյանը արձանագրում է բառի հետևյալ իմաստները. 1.Տղամարդու գլխարկ, փափախ: 2. Սյան գլխին ավելացրած փայտ, գլխափայտ (գավառական): 4. Ծաղկի բաժակը¹¹: Փոխաբերաբար ունի նաև *նամուս*՝ *պատիվ* իմաստը:

Գօտի¹² գոյ.՝ «...կամարաձէւ լայն ժապավեն մը՝ զարդարուն երեսով եւ ներքին ամուր նիւթով ետեւի կողմէն կառնուի եւ զոյգ ճարմանդով առջեւէն իրար կազուցուի: Գօտին այժմ փորուրարին վրայէն կկապենք...¹²»: «Եւ *գօտի* մաշկեղէն ածեալ ընդ մէջ իւր» (Դ Թագ 1:8): Թերևս բնիկ հնդեվրոպական բառ է: Ըստ Հ. Աճառյանի՝ բարդված է *gou* և *ti* բառերից. *տի* նշանակում է *կապ*, որ ծագել է նախալեզվյան *-de*՝ կապել արմատից,

⁶ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 339:

⁷ Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 88:

⁸ Տե՛ս Հ. Աճառյան, հ. 1, էջ 529:

⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 154:

¹⁰ Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 530:

¹¹ Տե՛ս Ս. Մալխասեանց, ԱԲԲ, 1, էջ 472:

¹² Տե՛ս Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 108:

իսկ անձանոթ *գաւ* բառը պետք է նշանակեր *մէջք*, այսինքն՝ *մէջկապ*¹³: *Գօտի* բառը արդի հայերենում բազմիմաստ բառ է և բազմաթիվ բնագավառների մեջ գործածվում է որպէս տերմին. 1. Մեջքի գոտի, մեջկապ, 2. Լեռնաշղթա: 3. Մոլորակների ուղեծրի շրջանակը (աստղագիտ.), 4. Տարածություն երկու միջօրեականների միջև (աշխարհագր.), 5. Գնդի մակերևույթի մի մասը (երկրաչափ.), 6. Երկրի տնտեսական որոշ հատկանիշներով բնորոշվող հատված (տնտեսագիտ.), 7. Պատի վրա որպէս զարդ ձգվող ելուստային շերտ(ճարտարապետ.), 8. Թոքերի ճնշումը չափող գործիք (բժշկական), 9. Ռետինե օղալից շրջանակ՝ չսուզվելու համար(սպորտային): 10. Պատերազմի ժամանակ ռազմական ընդհանուր տարածք (ռազմագիտ.):

Եմփիորոն (ոմփորոն)՝ եպիսկոպոսական զգեստների վրա դրված ուսանոց՝ խաչերով զարդարված երկար ու լայն ուրար՝ ծոպերով ու երիզներով: Սա բացառիկ զգեստ է ձեռնադրյալ եպիսկոպոսի համար և տրվում է ձեռնադրության ժամանակ. «Քահանայապետն ունի ի վերայ իւր զպատուական *եմփիորոնն*՝ ի փառս» (Լամբրոնացի: ՆՀԲ, 1, 658): Բառը փոխառյալ է հունարենից. նշանակում է *ուսի վրա կրել*: Այստեղից է նաև վրացերենի *ամփիորոն* բառը: Գործածական է նաև *լայնամփորոն* բառը¹⁴:

Զգեստ՝ գոյ.: Որևէ հագուստ եկեղեցական արարողությունների պահանջով՝ յուրաքանչյուր պաշտոնին համապատասխան, օրինակ՝ դպրի զգեստը *շապիկն* է, սարկավագինը՝ *ուրարը*, քահանայինը՝ *գոտին*, շուրջառն ու սաղավարտը, եպիսկոպոսինը՝ *եմփիորոնն* ու *խույրը*, կաթողիկոսինը՝ *կոնքեռը*: Եկեղեցական զգեստներ են համարվում նաև *վերարկուն*, *փիլոնն* ու *վեղարը*: Բնիկ հայերեն բառ՝ *ves* արմատից, այս բառը հայերենի մեջ ունեցել է (*ս*-ի անկումով)՝ *գե*, բայական վերջավորությամբ՝ *գենով*՝ *ստ* մասնիկով՝ *գեստ*, որ *գ* նախորդով գորանալով՝ դարձել է *զգեստ*¹⁵: «Զմուռս եւ ստաշխն եւ կասիա ի զգեստէ քումմէ ի տաճարաց փղոսկրէից» (Սղ 44:9): Իսկ *կիսազգեստը* հագնում են բարձրաստիճան ժամարարներին սպասարկող սարկավագները կամ սարկավագություն անող վարդապետներն ու քահանաները, և սա պատիվ է երկուստեք: «Քահանայական զգեստին կեսը կը ցուցնէ՝ այսինքն՝ *շապիկ, բազպան, փորուրար ու գօտի*՝ առանց շուրջառի ու վակասի, իսկ սաղաւարտը երբեմն կը դրուի եւ երբեմն ոչ: Հին աւանդութեանց մէջ

¹³ Տե՛ս Ն. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 608:

¹⁴ Տե՛ս Ն. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 26:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 88:

կիսազգեստի յիշատակութիւն չկայ եւ նորամուտ ձեւ մը կը նկատուի իրաւամբ»¹⁶:

Թագ՝ գոյ., իրանյան փոխառություն է: «Դու գիտես, Տէր, զկարիս իմ, զի զարշէլի է ինձ *թագա...*» (Եսթ 14:16): «Անունը կը գործածուի իբրեւ համանշանակ եպիսկոպոսական խոյրին, որ երկճղի ու սրածայր ըլլալուն՝ ռամկական բառով *չաթալթագ* կկոչուի...Բուն թագի հետ բնաւ նմանութիւն չունի»¹⁷: Արդի հայերէնում ունի բազմաթիւ իմաստներ. 1. Թագավորների գլխի զարդարուն խորանաձև ծածկոց: 2. Բարձրագույն հոգևորականների գլխի զարդարուն ծածկոց, խույր: 3. Հանդիսավոր զգեստավորության ժամանակ քահանայի գլխի ծածկոց: 4. Պսակվողների պսակավոր գլխանոց: 5. Թագավորական իշխանություն(փոխաբ.): 6. Թագավոր, արքա(փոխաբ.): 7. Լեռան գագաթ՝ կատար (փոխաբ.): 8. Չվի կեղևի երկու թասակաձև մասերից յուրաքանչյուրը(փոխաբ.): 9. Արեգակի սկավառակը: 10. Փառք(փոխաբ.): 11.Ատամնապսակ(կազմախոսական):

Թաշկինակ՝ գոյ., քրտինք սրբելու շոր: Հոմանիշ է *դաստառակին, բռնիչին*, որը հատկապես գործածվում է պատարագի ժամանակ ժամարարի ձախ կողքից կախված՝ որպես անձեռոցիկ: «Մինչեւ ի հիւանդս տանել ի քրտանէ նորա *թաշկինակս*» (Գրծ 19:12): Հ. Աճառյանը բառը չի ստուգաբանում:

Ըստ Գ. Զահուկյանի՝ այն կարող է փոխառված լինել իրանական աղբյուրից¹⁸: Արդի գրականում բացատրվում է որպես 1. Քիթ սրբելու շոր: 2.Գլխաշոր: 3. Մարդ, որին որոշ նպատակներով օգտագործում են ժամանակավորապես, խաղալիք (փոխաբ):

Թիկնոց// թիկնանոց// թիկանոց՝ գոյ.: Նոր զգեստ է. «Հայ ծեսին մէջ դպիրներու շապիկին վերի մասը աւելի հարուստ եւ յաճախ ասեղնագործեալ ուսանոցներ ունի, որը կծածկէ ուսերն ու թիկունքին վերի մասը եւ կուրծքին վրայէն կիջնէ մինչեւ գոտին»¹⁹: «Շրջեալ կայր *թիկնոցն* ի վերայ արտի նորա» (ՆՀԲ, 1, 811): Գործածվում է հետևյալ իմաստներով. 1. Անթև կարճ վերարկու, 2. Թիկունքի վրա գցելու անթև զգեստ: 3. Արևմտահայերի մոտ՝ տղամարդկանց վրայի մահուդից զգեստ՝ երկար փեշերով՝ մինչև ծնկները, սերտուկ: Արդի հայերէնում նաև կենդանաբանական տերմին է, որ նշանակում է որոշ անողնաշարավորների մարմինն ընդգրկող մաշկային ծալքերից յուրաքանչյուրը:

¹⁶ Տե՛ս Ս. Օրմանեան, ԾԲ, էջ 144:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 120-121:

¹⁸ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 258:

¹⁹ Տե՛ս Ս. Օրմանեան, ԾԲ, էջ 123:

Խոյր՝ գոյ. քահանայի գլխի ծածկոց, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականների գլխի զարդարուն ծածկոց. « Եւ դիցես զխոյրն ի վերայ գլխոյ նորա. Եւ դիցես զթիթեղնն սուրբ ի վերայ խուրին»(Ելք 29: 6): *Խոյր* բառը պահլավական փոխառություն է՝ *խոյր*՝ *խուրի*, *պահլ.*՝ *xod, xoi*՝ *սաղավարտ, թագ, փաթոթոց, xauda*՝ գլխարկ²⁰:

Կապայ՝ գոյ. *պարեգոտ, հոգևորականի երկար զգեստ*, որ հագնում են վերարկուի տակ՝ շապիկի վրա. բառը փոխառյալ է արաբերենից և այստեղից տարածվել է բազմաթիվ լեզուների մեջ՝ *qaba*՝ պարեգոտ. «Ոչ ունելով նոցա(յունաց) սովորութիւն զգենուլ *կապայ*՝ ի մենջ առեալ՝ ոչ ուղղախօսեն» (ՆՀԲ, 1, 1053): Ունի նաև այլ իմաստներ՝ 1. Ընդհանրապես կանանց երկար զգեստ, 2. Օձի շապիկ, 3. Գրքի վրա անցկացվող հաստ թուղթ՝ գիրքը մաքուր պահելու համար:

Կնգուլ՝ գոյ., *կրոնավորի գլխարկ*: Բառը փոխառվել է հունարենից, ապա տարածվել է այլ լեզուների մեջ, լատիներեն՝ *cucullus*՝ աբեղայի գլխարկ²¹: «Պարտ էր՝ զի եւ *կնգղիղ* մի լիցի կարօտ» (ՆՀԲ, 1, 1104): Արդի հայերենում բառն ունի նաև այլ իմաստներ ինչպես՝ 1. Մկրտվող երեխայի վրա գցվող սավան կամ շոր: 2. Փեսայի կողմից հարսին տրվող ոսկեզարդ գլխարկ (գավառական): 3. Բամբակի բույսի խակ՝ չբացված պտուղը (բուսաբան.): 4. Գույքանի էջի վրա գնդաձև փայտը, որից անց են կացնում ճամբարակի օղը, արմունկ, կոռան, պորտ, փամփալ(գավառական):

Կողոբ/ կոլոփ՝ գոյ. *անթև վերարկու, փիլոն, կրոնավորի կարճ զգեստ*: «Յորժամ զպատարագն մատուցանէր, զգենոյր *զկողոբս* առաքելոյն...» (ՆՀԲ, 1, 1113): Փոխառյալ է հունարենից, գործածված է նաև *կողովբիոնայ, կողոբիոնայ*²² ձևերով:

Կոնքեռ՝ գոյ. «Լծորդ յունական *կոնիքեռ* եւ *ենքիքիոն* անունին: *Կոնքեռը* քառակուսի զարդ մըն է՝ ասեղնագործուած կամ ընտիր կերպասէ շինուած, որ երեք անկիւններէն փոքրիկ ծոպեր ունի եւ չորրորդ անկիւնէն երիզով կը կախուի գօտիէն՝ հայրապետին ձախ կողմէն եւ ձախ ազդրին վրայ»²³: «Եւ *կոնքեռ* զահեակ բարձօք. որպէս կաթողիկոս» (Մաշտոց: ՆՀԲ, 1, 1115): Փոխառյալ է հունարեն *ծունկ* և *ձեռք* բառերից²⁴:

Կրկնոց՝ գոյ. կրկնյալ կամ երկրորդ զգեստ փարաջայի վրայից, փիլոն, աղաբողոն, թիկնոց. «Եւ ասէ ցնա. Ա՛յր ուղղորդ ելեալ յերկրէ, եւ արկեալ

²⁰ Տե՛ս Գ. Զահուկյան, ՀԼՊ, էջ 527: Ս. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 2, էջ 282:

²¹ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ.2, էջ 607:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 622:

²³ Տե՛ս Ս. Օրմանեան, ԾԲ, էջ 146:

²⁴ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 633:

զիրել *կրկնոց*» (Ա Թգ 28:14): Կազմված է *-ին* ածանցով՝ *կրկին* բառից, որն էլ *երկ* արմատից՝ *-կին* վերջածանցով՝ *երկկին*²⁵: Ս. Մալխասյանցը բառը բխեցնում է *կրուկն* (*կրունկ*) բառից՝ մեկնելով՝ «ոտքի վրա հետ դառնալով, դարձեալ»²⁶:

Հանդերձ՝ գոյ., հոմանիշ է *զգեստ* բառին. վերջինս «զգեստներուն ամբողջութիւնն է կամ թէ հանդերձ է ներքին զգեստի վրայէն հագուած կտորը»²⁷: Այս բառի պարզ արմատն է *դերձ*. իրանական փոխառություն է. *դերձակ* բառը գալիս է պահլավերեն *darzak* ձևից, իսկ հանդերձ՝ *handarz* ձևից²⁸: «Եւ եհան ծառայն անօթս ոսկոյ եւ անօթս արծաթոյ եւ *հանդերձս* եւ ետ Ռեբեկայ եւ ետ ընծայս եղբարց նորա եւ մօրն» (ՄՆ 24:53): Բազմիմաստ բառ է. 1. հանդերձ, հագուստ, 2. ծածկոց, ծածկույթ, 3. Շորի կտոր, լաթ, ձորձ, 4. Սարք, պատրաստություն:

Հողաթափ՝ գոյ.: «Հին ձևով կօշիկ մը, որ ոտքը հողէն կը պահպանէ, բայց գարշապարէն վեր չ'ելլէր. ընդհանրացած սովորութիւն է ներբանները հաստ շինել եւ մէջը ծառի կեղեւ կամ կաշի լեցնել՝ եկեղեցոյ գետնին խոնաութենէ չվնասուելու համար»²⁹: «Ած զգօտի քո եւ արկ *զհողաթափս* զոտս քո» (Գրծ 12:8): Բառն առաջացել է բնիկ հայ. «հող» բառի (նախալեզվյան *polo՝ լայն, հարթ* արմատից, հայերեն *հոլ՝* մերկ)³⁰ և «թափ» բայարմատի միացումով:

Դենջակ՝ գոյ.: Հունարեն *դենջակ* բառն է, որ փոխառված է լատիներեն *lintheum* բառից՝ *վուշի կտոր, կտավ*, իսկ *linum* նշանակում է *վուշ*³¹: Ընդհանրապես բառը նշանակում է *անձեռոցիկ*: Եկեղեցու մեջ *դենջակը* ոտնավայի ժամանակ գործածում է հանդիսադիրը որպես գոգնոց. «...եւ դնէ զհանդերձսն եւ առեալ *զդենջակ* մի սփածաւ» (Յովն 13:4): Արդի հայերենի բառարաններում արձանագրված է որպես հնացած բառ:

Նարթս՝ գոյ: Նարտը երիզաձև զարդ է, որ պսակի ժամանակ հարսն ու փեսան կապում են գլխներին. «այժմ պարզապես կարմիր ու ճերմակ մանածով շինուած բարակ առասանի ձեւով բան մըն է կապուածը, զոր իւրաքանչիւր քահանայ պատրաստ ունի իր մօտը»³²: Այս բառի ծագումն անհայտ է: ՆՀԲ-ում բառը համեմատվում է արաբերեն *նիր* բառին՝

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 681:

²⁶ Տե՛ս Ս. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 2, էջ 505:

²⁷ Տե՛ս Ս. Օրմանեան, ԾԲ, էջ 147:

²⁸ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 657: Գ. Ջահուկյան, ՀԼՊ, էջ 530:

²⁹ Ս. Օրմանեան, ԾԲ, էջ 149:

³⁰ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 111:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 168:

³² Տե՛ս Ս. Օրմանեան, ԾԲ, էջ 161:

«գույնզգույն նկարել, գունագուն թել եւ հիւսք»³³ : Պատահական նմանություն ունի վրացերեն *նավրոտի*՝ մի տեսակ ծառ³⁴ : «...*նարոտ* պէսպէս նկարուց. այն էր պարանոցի նորա կապուտ» (Դտ 5:30):

Նափորտ՝ գոյ. «Համանշանակ է *շուրջառ*» անունին եւ անխտիր գործածուած իրարու տեղ. եկեղեցական զգեստն դուրս ալ՝ մէջը փաթթուելու ընդարձակ զգեստի անուն է»³⁵ : Հ. Աճառյանը նշում է, որ այս բառը փոխառոյալ է հունարէն մի ձևից, որի ճիշտ համապատասխան բառը կորած է : Այն նշանակել է *հաղորդություն, զոհ առ Աստված*, բայց պիտի ունեցած լինի նաև *վերարկու, ծածկոց* իմաստը³⁶ : «Ոչ ոք էր արկեալ զիրեաւ *զնափորտն*» (Փարպ., Պատմ. Հայոց, 34):

Շապիկ՝ գոյ., պահլ. փոխառություն՝ *sapik*՝ նվիրական շապիկ զրադաշտականաց՝ դպիրների և սարկավագների բարակ վերարկու : «Որ հանէ ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ի նմանէ եւ *զշապիկս* » (Ղուկ 6: 29): Արդի հայերէնում ունի հետևյալ իմաստները՝ 1. Տղամարդու ներքնաշապիկ, նաև վերնաշապիկ : 2. Կանացի սպիտակեղենի մաս : 3. Արտաքին ծածկույթ՝ տեսք՝ որևէ բանի (փոխաբ.) : 4. Գրաշապիկ(տպագրական) : 5. Թղթե պահպանակ՝ գրքի կամ տետրակի կազմը մաքուր պահելու համար : 6. Ատամնաշապիկ : 7. Սողունի մաշկ՝ մորթ :

Շուրջառ՝ գոյ., եկեղեցական զգեստ, որ հագնում են հոգևորականները մյուս զգեստների վրայից պատարագ մատուցելիս և հանդիսավոր արարողությունների ժամանակ. «Զգենու *զշուրջառն*...» (ՆՀԲ, 1, 492):

Պատմունճան՝ գոյ., պահլ. փոխառություն՝ *patmocan*՝ զգեստ, հանդերձ, զարդարանք³⁷ : Բազմիմաստ բառ է. 1. երկար ու լայն վերնազգեստ, պարեգոտ : 2. Փառավոր զարդարուն զգեստ : 3. Ընդհանրապէս զգեստ : Սովորաբար գործածվում է որպէս համանշանակ շապիկի : «...եւ զգեցոյց նմա *պատմունճան* բեհեզեայ, եւ արկ մանեակ ոսկի ի պարանոց նորա» (Օն 41: 42):

Պարեգոտ՝ գոյ.՝ թերթ վերնազգեստ, թիկնոց, հոգևորականի զգեստ՝ կապա, փարաջա : «Մի՛ զգենուցուք ասէ երկուս *պարեգոտս*» (Մարկ 6:9) : Հ. Աճառյանը *պարեգոտ*-ը համարում է իրանական ծագում ունեցող, պահլ. *paragaud* հոմանիշից՝ թերթ վերնազգեստ, պատմունճան, կապա³⁸ : Այդ

³³ Տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 405:

³⁴ Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 433:

³⁵ Տե՛ս Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 161:

³⁶ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 437:

³⁷ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 46: Գ. Զահուկյան, ՀԼՊ, էջ 540:

³⁸ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 59:

ստուգաբանությունը ընդունում է նաև Գ. Ջահուկյանը՝ համեմատելով նաև հունարենի հետ՝ *ծիրանաքղանցք զգեստ*³⁹։ Է. Աղայանը բառը համարում է բուն հայկական կազմություն՝ *պարե-գօտ* կամ *պարի-ա-գօտ* և ենթադրում է, որ իրանական լեզուները փոխառել են հայերենից։ Նա *գօտ*-ը նույնպես հայերեն բառ է համարում⁴⁰։ Լ. Հովհաննիսյանը գրում է, որ Է. Աղայանի ստուգաբանությունը ավելի համոզիչ է⁴¹։ Արդի հայերենի բառարաններում այս բառը նշվում է որպես հնացած ձև։

Սաղաւարտ՝ գոյ. արքունի պաշտոնյաների և կրոնավորների խույր։ «Եւ առէք *զսաղաւարտն* փրկութեան եւ զուսեր Հոգւոյն» (Եփ 6: 17)։ Սաղավարտը «յատուկ քահանայական զարդ է եւ օրհնութեամբ կը տրուի»⁴²։ Այս բառը նաև ռազմական տերմին է՝ հատուկ ձևի մետաղյա զլխարկ՝ պաշտպանվելու համար։

Սքեմ՝ գոյ. «հասարակ կենաց մեջ գործածելի եւ ծիսակատարութեանց յատուկ եկեղեցական զգեստներէն տարբեր։ Սքեմին մասերն են *պարեգօտ, վերարկու, վեղար, փակեղ ու փիլոն*»⁴³։ Այս բառը փոխառյալ է հունարենից՝ *տարագ, ձեւ*, որից էլ վրացերեն *սքիմա*՝ ձև, պատկեր, քահանայական զգեստ, ռուսերեն՝ *схи́ма*⁴⁴։ «Ընկալաւ ի նմանէ *սքեմ* կրօնաւորութեան» (ՆՀԲ, 2, 768)։

Վակաս՝ գոյ.՝ ըստ երբայեցիների՝ քահանայապետի կրծանոցը, իսկ ըստ մեր եկեղեցու՝ «եկեղեցական կամ քահանայական զգեստի մաս մը, որ իբր շուրջառի օձիք՝ ուսերուն վրայ կը կանգնի... Բայց վակասը ոչ թէ շուրջառին, այլ սաղաւարտին մասն է, որուն ետեւէն մաս մը կիջնէր դէպի վիզը ծոծրակին վրայ, եւ որուն վերջաւորը աւելի զարդարուն էր»⁴⁵։ Կարող է լինել փոխառյալ իրանական արմատից, վրացերենում կա՝ *վակասի*։ «Եւ արասցեն *զվակասն* յոսկւոյ սրբոյ եւ ի կապուտակէ» (Ելք 28:6)։

Վեղար՝ գոյ.՝ հայ կրոնավորի գլխի ծածկույթ, սրածայր, սաղավարտաձև, սև քողով ծածկված։ Փոխառյալ է հունարենից, սակայն

³⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 541։

⁴⁰ Է. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 132-135, 48, 50։

⁴¹ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Եր., 2016, էջ 43։

⁴² Մ. Օրմանեան, ԾԲ, էջ 179։

⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 184։

⁴⁴ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 289։

⁴⁵ Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 185։

բառն ավանդված չէ, կա նաև լատիներեն՝ *velarium*՝ քող, ծածկույթ⁴⁶: «...սարքուլայով եւ երկու կանգուն *վեղարով*» (ՆՀԲ, 2, 800):

Ուրար՝ գոյ.: Երկար, ժապավենաձև կտոր կամ գոտի, որ սարկավագները եկեղեցում սպասավորելու ժամանակ կրում են ձախ ուսի վրա: Այս բառը համեմատվում է լատ. *orarium*՝ երես սրբելու թաշկինակ, և հունարեն *oraron* բառերի հետ: Հունարենից բառը փոխառված է ասորերենում՝ *urara*. «Խաչանիշ *ուրարամբ* ըստ Ահարոնի» (Ժամագիրք: ՆՀԲ, 2, 559): Կարծիք կա նաև, որ *ուրար*-ը փոխառված է հենց ասորերենից, քանի որ լատիներենից փոխառելու դեպքում պիտի ունենայինք *որար* կամ *ովրար*⁴⁷: Կան երկու տեսակ ուրարներ՝ քահանայական և սարկավագական: Քահանայական ուրարը կոչվում է նաև *փորուրար*⁴⁸: Կա նաև *բազկուրար*՝ ուրարի ձև ունի, բայց փոքր է և ավելի լայն ծայրեր ունի. «Տացէ նմա *գբազկուրարն*՝ դնելով ի ձախ բազուկն (Մաշտոց, Պտրգ., 476): *Ձեռնուրար*, որ նշանակում է ձեռքի ուրար կամ բազպան. «Զայս *ձեռնուրարս* եւ բազպանս քահանայական համարել ի սպասաւորութիւն սպասաւորաց (Մաշտոց: ՆՀԲ, 2, 154):

Ուսանոց՝ շապիկի վերնի զարդարուն մասը, վակաս. «Զգենոյր քահանայապետն եւ դներ *յուսանոցն* գերկոտասան ակունս» (ՆՀԲ, 2, 555): Նշանակում է նաև *ուսադիր*:

Փակեղն՝ գոյ.՝ գլխի փաթաթան, փաթոց: «Քահանայք եւ երիցունք՝ *փակեղն* միայն արկանեն ի վերայ երկոցունց ուսոցն...» (ՆՀԲ, 2, 925): Փոխառյալ է հունարենից՝ *կապոց*, *տրցակ*, հետևաբար՝ *գլխի չալմա*: Արդի գրականում նշանակում է *կրոնավորների գլխարկ*, որի հայկական ձևը Պոլսի պատրիարքարանն է հորինել՝ *ուսափակեղ*⁴⁹: *Փակեղ* նշանակում է նաև կանանց գլխարկ: Բացի այդ՝ կազմախոսական տերմին է՝ առանձին մկաններն ու նրանց փնջերը պատող միացուցիչ հյուսվածքային նուրբ թաղանթ: *Փակեղ* է կոչվել նաև դդմի մի տեսակը:

Փիլոն՝ գոյ.՝ շուրջառ, կրոնավորի անթև վերարկու: Մետաքսյա ծաղկավոր կերպասից փիլոնը շնորհվում է քահանաներին և արեղաներին իբրև պատվի նշան: Այս բառը փոխառյալ է հունարենից, վերջինից նաև

⁴⁶ Տե՛ս Ս. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 4, էջ 328:

⁴⁷ Տե՛ս Շ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 615:

⁴⁸ Նորագյուտ բառ՝ *փորի ուրար*՝ քահանայի կամ եպիսկոպոսի զգեստավորման մաս, որ հագնվում է վզից և կրծքի վրայով իջնում մինչև ոտքերը (Տե՛ս Շ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 615: Ս. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 4, էջ 520):

⁴⁹ Տե՛ս Շ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 472:

լատիներեն *paenulo*, ռուսերեն *фелонь*, վրացերեն *փելոնի*: «Ոչ արձակե՛ գփիլոնն ըստ ամենայն պատճառի» (ՆՀԲ, 2, 942):

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ մենք դիտարկեցինք այն բառամիավորները, որոնք առաջնային նշանակությամբ ծիսական, կրոնական բնույթի են: Մեր կողմից ներկայացված ծիսական եզրույթները՝ հանդերձանքի անունները, հայերենի տերմինաբանական համակարգի մաս են կազմում, հետևաբար ունեն կարևոր նշանակություն հայերենի տերմինաբանության համար, և հիշյալ բնագավառի ուսումնասիրությունը նույնպես գիտական որոշակի արժեք է ներկայացնում: Ծիսական հագուստներին վերաբերող մեր դիտարկած բառամիավորները մեծ մասամբ փոխառյալ են պարսկերենից և հունարենից: Ինչպես հայտնի է, հայերենը ամենաշատ փոխառություններ կատարել է իրանական լեզուներից կրոնակեղեցական փոխառությունները հիմնականում միջին պարսկերենից են:

Օգտագործված գրականություն

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, գիրք 1, 2, Ե., 1976:
2. Աղայան Է., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Ե., 1926:
4. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
5. Աւետիքեան Գ., Սիրմելեան Հ., Աւգերեան Մ., Նոր հայկազեան բառարան, հ. 1, Եր., 1979, հ. 2, Ե., 1981:
6. Բարսեղյան Հ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., 1973:
7. Զօհրապեան Յ., Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1805:
8. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1969:
9. Խաչատրյան Լ., Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարածք բառեր, Ե., 2003:
10. Խաչատրյան Լ., Գրաբարի բացատրական բառարան, Ե., 2003:
11. Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Ե., 2012:
12. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան. նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010:
13. Հովհաննիսյան Լ., Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Ե., 2016:
14. Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, Ե., 2000:

15. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Ե., 1944:
16. Զեպէեան Ղ., Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս-Լիբանան, 1986:
17. Պապիկյան Ս., Հայ կրօնակեղեցական բառապաշարը և նրա պատմական զարգացումը, Սեդմազիր, Ե., 2017:
18. Ջահուկյան Գ., Հայերէն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
19. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
20. Օրմանեան Մ., Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1979:

Сирарпи Карапетян

**Древнеармянские названия ритуального обряда как источник обогащения
лексики современного армянского языка**

Заклучение

Ключевые слова и выражения: грабар, ритуальный, одежда, термин, лексика, церковный, заимствование, греческий, персидский, латынь

Цель данной статьи является рассмотрение армянских обрядовых терминов, в частности слов, характеризующих церковную одежду. Для этого мы сочли необходимым выделить названия церковных одежд, указать источники происхождения корневых слов, привести оригинальные примеры рассматриваемых слов, чтобы показать их семантические особенности.

Материалом для изучения послужили различные исследования, посвященные религиозным и иным терминосистемам, известные толковые и профессиональные словари, различные библиографические источники. Мы сочли целесообразным толковать каждое слово, выражающее обрядовую одежду с семантической точки зрения, что и стало основанием, с одной стороны, для выделения этих церковных терминов, а с другой стороны, для оценки их как таковых, как с синхронной, так и диахронной точек зрения, тем самым оценивая важнейшую роль грабара в современном восточноармянском языке в плане обогащения словарного запаса и формирования и пополнения терминосистемы. Терминосистема каждой области не отделена от общей лексики, а является ее подсистемой, набором специфических терминов.

Конечно, религиозно-церковный словарный состав армянской лексики в основном традиционен, многие слова и термины, относящиеся к этому слою, относятся к дописьменному периоду, записываются с V века, однако в ходе исторического развития и здесь произошли различные семантические изменения. Представленные нами обрядовые термины - названия наряда -

входят в терминологическую систему армянского языка, поэтому имеют важное значение для терминологии армянского языка, а изучение указанной области также представляет определенную научную ценность.

Sirarpi Karapetyan

**Old Armenian denominations of ritual clothing as a source of enrichment
of modern Armenian vocabulary**

Conclusion

Key words and expressions: Grabar, ceremonial, clothing, term, vocabulary, ecclesiastical, borrowing, Greek, Persian, Latin.

The aim of the present article is the examination of Armenian ritual terms, in particular, the words characterising church clothing. To this aim, we have considered it necessary to distinguish between the names of church clothes, to indicate the sources of the origin of the root words, to provide original examples for the considered words in order to reveal their semantic peculiarities. Various studies devoted to religious and other term-systems, well-known explanatory and professional dictionaries and various literary and bibliographic sources have served as material for this research. We have found it expedient to interpret each word expressing ritual clothing from the semantic point of view, which has become the basis for, on the one hand, the division of these church terms, and on the other hand, for evaluating them as such, from both synchronic and diachronic points of view, thereby, valuing the most important role of Grabar in the Modern Eastern Armenian language in terms of vocabulary enrichment as well as term system formation and replenishment. The terminology system of any field is not separate from the general vocabulary, but is a subsystem of it, a set of specific terms.

Of course, the religious and ecclesiastical word layer of the Armenian vocabulary is mainly traditional, many words and terms belonging to that layer are from the pre-written period, dating back to the fifth century, however, in the course of historical development, various semantic changes have taken place here as well.

The ritual terms presented by us - the names of the outfit - are part of the terminological system of Armenian, therefore, they have significance for Armenian terminology, and the study of the mentioned field also has a certain scientific value.

Խմբագրություն է ուղարկվել 24.12.2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.01.2023թ.

Հրապարակման է հանձնարարվել 28.04.2023թ.